

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՐԵՐԵՐԻ ԶԱՐԻ



Տարեկան գինը 10 րուբլի: Կէս տարեկանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:
Քիֆիլուսում դրոշմում են խմբագրատուն մէջ:
Մեր հասցեն. Тифлисе, редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Պարագրաֆները բաց է տալու մինչև 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):
Ցայտարարութիւնը ընդունուած է ամեն ինչովով:
Ցայտարարութիւնները համար վճարում են
խրատարանները տողատեղին 10 կոպէկ:
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՈՒՆԵՐ

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Անիի ուսումնասիրութեան արթնում.—Անի-
ի ՏԵՄԵՐԻՍԻՆ.—Անիի Կայսերական Մե-
ծութեան Կովկասի Փոխարքայ գնդերս և զին-
ուսան կռու Վերոնցով-Գալիցիայի յայտարարու-
թիւնը. Նորհրդակցութիւն Փոխարքայի մօտ:
Մամուլ. Ազգայնական և քաղաքական հոսանք-
ները. Նախընտրի ազգայնական օգտին.
Ներքին լուրեր.—ՄՐՏԱՔԻՆ ՏԵՄԵՐԻՍԻՆ.—
Նամակ Գալստաստեղից.—Հեռագրեր.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՆԻԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԱՌԹՈՎ

Մեր ընթերցողները գիտեն, որ Ներ-
կայումս Անիում պրոֆեսոր Մարի Գեղա-
վարութեանը կատարվում են պեղումներ
և որ գտնվել են մի քանի նշանաւոր
հնութիւններ և գեղեցիկ քանդակագոր-
ծութիւններ: Այդ պեղումները, թէ նոր
էջեր են բաց անում Անիի ուսումնասի-
րութեան մէջ, թէ հարստացնում են հնա-
գիտական հետազոտութիւնների շտեմա-
րանը. Կովկասում և թէ լոյս են սփռում
պատմական կարևոր դէպքերի և շրջան-
ների վրա:

Մեր հասարակութեան մի նշանաւոր
մասը հետաքրքրված է Անիի հնութիւն-
ներով, իբրև անցեալի գեղեցիկ յիշատակ-
ներով, իբրև ցեղային տաղանդի և ձիր-
քերի արտայայտութեան մի ցուցանիս-
գէտով, իբրև ճարտարապետական հոյա-
կապ նմուշների մի մեծ ժողովածուով:
Բայց կայ մի ուրիշ կարևոր և էական
կողմ, որ շատ ուշագրութեան չէ ան-
վում, այդ այն է, որ Անին տալիս է մի
բան, որ մինչև այժմ մեզ չէին տուել
պատմական մեր գրքերը և յիշատակա-
րանքները: Դա այն է, որ Անիի գաղափար
է տալիս մարդկանց կեանքի մասին մեր
անցեալում: Ինչ էր հայ մարդու տունը,
ինչպէս էր քաղաքի կազմութիւնը, ինչ
հասարակական կամ արդիւնաբերական
շինութիւններ օրինակ բաղնիքի ձևա-
հանք կային քաղաքում, ինչի վրա էր
կենտրոնացած մարդկանց առանձնաւոր-
ութիւնը, ինչ միջոցներ էին ձեռք առնված
ապահովելու վաճառականութիւնը, ինչ
էր բերդաքաղաքը և ինչ առանձնայատ-
կութիւններ ունէր նա, ինչ կապ կար
մայրաքաղաքի և շրջակայի մէջ—այդ և
դրանց նման բազմաթիւ հարցեր բաւա-
րար լուծում կը ստանան, երբ բաւա-
նալիք ընդարձակ կերպով առաջ տար-
ված կը լինի Անիի ուսումնասիրութիւնը:

Անի մի քանի տարի է, որ պրոֆեսոր
Մառ ամառվայ մի երկու ամիս ունիւրում
է Անիի պեղումներին և ուսումնասի-
րութիւններին: Նա իր արձագանք-
ութեան տակ ունի սահմանափակ գու-
մարներ, ուստի և չէ կարող գործը ըն-
դարձակել և մի անգամից պեղումների
մեծ դաշտ բանալ: Այդ պատճառով հա-
զիվ թէ փոքր ինչ առաջ են գնում պե-
ղումները և երևան են գալիս հետա-
քրքրական գործեր, հետազոտողը ստիպ-
ված է լինում նորից դադարեցնել աշխա-
տանքները և յետագայի յայտնի տարիներ
ըն համար:

Ծաւալի է, որ մի գործ ձգտելի և
դանդաղ առաջ գնայ հէնց այն պատճա-
ռով, որ սահմանափակ են այն միջոց-
ները, որոնք գտնվում են հետազոտող-
ների ձեռքերում: Մենք տեղեկութիւն-
ներ ունենք, որ այդպիսի հանգամանք
կարող է զիստից այս տարվայ ուսում-
նասիրութիւններին և պեղումները շու-
տով կը դադարեցնեն, որովհետև հնագի-
տական տուած գումարները արդէն ծախս-
ված են և նոր աշխատանքներ կատարել
անհնարին կը լինի:

Եթէ ինքը հետազոտողը լուր է և ոչինչ

չէ ասում, կարծում ենք մեր մէջ պէտք
է գտնվել մարդիկ, որոնք իրանք իրանց
կողմից աշակցելին գործին և հնարաւո-
րութիւն տալին լրացնելու պեղումները
գտնէ այն կէտում, ուր այս տարի նրանք
սկսված են: Եւ հարկաւոր չէ շատ մեծ
գումար: Այս տարվայ համար բաւական
է մի 1000—1500 րուբլի գումար: Եւ
միջին այն բազմաթիւ ունեւորները, որոնք
սիրում են Անիով պարծենալ, մի համեստ
գումարի պատճառով, թոյլ կը տան, որ
սկսված և շարունակվող գործը կանգ
առնի:

Այն, ինչ որ անում է պրոֆեսոր Մա-
ռը, մենք պէտք է անէինք մեր պատմու-
թեան, մեր ազգի կեանքի ուսումնասի-
րութեան համար: Մենք չենք անում:
Գտնէ աշակցելիք նրան, որ եկել է և իր
բոլոր եռանդով և ուսումնասիրական ըն-
դունակութիւններով գործում է մեր եր-
կրում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՄԵՐԻՍԻՆ

ՆՈՐԻՆ ԿՅՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱ-
ՍԻ ՓՈՆՏՐԱՔՍ ԳԵՆԵՐԱՆ ԱՆԻԻՏԱՆՏ ԿՈՍՍ
ՎՈՐՈՆՅՈՎ ԴԱՇԿՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

(Նորհրդակցական ուղարկված նամակագրութեան, դա-
ւաւապետներին, ուստիկանագրութեան, պրոֆեսորներին
գիւղական ժողովրդի մէջ տարածելու համար)

Մեր ամենաողորմած Թագաւոր Կայսրի կառ-
քով և վստահութեամբ իմ կառավարութեան
յանձնված այս երկրը զարդով, ևս ցաւօք արտի
տեսայ, որ մի քանի տեղերում գիւղացիները,
չարաւիտ մարդկանցից զրկված՝ համարձակ-
վել են ինքնակամ և բռնի գրաւել մասնաւոր
կառավարների հողերը և անտառները, ու-
նչափանք նրանց տները և կողպատել ստաց-
վածքը: Միայն հետ միասին, իմ գիտութեան
հասկացիլ և զանազան դիմումներ ու ցանկու-
թիւններ, որ անում էին գիւղացիները բերա-
նացի և զբաւոյ՝ իրանց անտառները և հա-
սարակական կարիքների մասին: Յայտարարու-
մի Կովկասի երկրի բոլոր գիւղացիներին.—

1) Օրէնքը խիստ պաշտպանում է ամեն սեփա-
կանութեան անխնայիք ձեռնմխելութիւնը
և առաւել ևս բռնի յափշտակութիւնը և
հնթարկում է այդ ստակ յանցաւորներին ոչ
միայն ծանր պատժի, այլ նախկան պա-
տասխանատուութեան, ուրիշ սեփականու-
թեան փաստ պատճառելու համար: Այսպէս,
Թագաւոր Կայսրը՝ Իր Բարձրագոյն ուկազով,
զրկւ է կառավարչական սենատին ապրիլի
10-ին 1905 թ., Բարձրագոյն հրամայել բարե-
հաճեց՝ սահմանել անկարգութիւն պատճառ-
գաւառներում առանձին ժամանակաւոր կոմի-
սիաներ, գիւղացիների յանցաւոր ժողովներում
մասնակցող մարդկանց որոշելու և նրանց
պատճառած փաստերի չափը հաշուելու: Այդ
փաստերը պէտք է պահանջվեն գիւղացիների
ժող. փերին մասնակցող և անկարգութիւններ
ու կողպատումներ սարքող գիւղական և շինա-
կան հասարակութիւնների բոլոր անդամների
ստացվածքներից: Այդպիսի կոմիսիաներ պէտք
է հաստատվեն և Անդրկովկասի այն գաւառ-
ներում, որտեղ անկարգութիւններ են տեղի
ունենել:

Վերոյիշեալ գիւղական հաստատութիւնների
կողմից իրանց կարիքների և ցանկութիւնների
մասին ինձ արված յայտարարութիւնների մէջ
ես գտնում եմ ուշադրութեան արժանի այն,
որոնք վերաբերում են ժամանակաւոր պա-
տարի գիւղացիների դէպի իրանց կառու-
ծատերերը ունեցած յարաբերութիւններին,
հերկիւի հողերին, արօտատեղիներ և անտառ-
ների պահպանութեան, գիւղական ներկայ հա-
սարակութիւնների անբաւար կազմութեան
և շինական պաշտօնական անձանց ուժիկի
սակաւութեան, քանակների օգտին նրանցից
պահանջվող տուրքի անորոշութեան, գոյու-
թիւն ունեցող շինական դպրոցների անբաւա-
րարութեան, հիւանդանոցներին վերապահված

ծախսերի ծանրութեան, գիւղական հասարա-
կութիւնների ճանապարհային և սայլային
տուրքերի անհաւասար բաժանման, այժմ գո-
յութիւն ունեցող արքունի. դէմաւային և հա-
սարակական գրաստական տուրքերի և հարկերի
գանձման անբաւարարութեան:

Այս բոլոր յայտարարութիւնները ես հրա-
մայեցի անյապաղ մշակել մասնաւորներին և
ապա ընել հարկաւոր դէպքում շինական հա-
սարակութիւնների միջոց ընտրած ներկայա-
ցուցիչներին մասնակցութեամբ: Ապա ես կը
ձեռնարկեմ ամեն միջոցների շուտով բաւա-
րարութիւն տալու գիւղական հասարակու-
թիւնների օրինաւոր ցանկութիւններին և ան-
կարգութիւնների վերացման, որոնք խափանում
են գիւղացիների բարեկեցութեան զարգա-
նումը և նրանց աշխատատեղ կեանքի հանգիստ
և կանոնաւոր ընթացքը: Բայց նախագիւ-
ղացում եմ, որ գիւղացիները ոչ մի դէպքում
չը պէտք է յոյս ունենան իրանց հողաբաժնի-
ները մեծացնելու—մասնաւոր կառավարչա-
րերի հողերի հաշով: Օրէնքը՝ պահպանելով
գիւղական հողաբաժնիների անձնականութիւն-
թիւնը, հաւասար կերպով պարտաւոր է պաշտ-
պանել և ամեն մի մասնաւոր սեփականու-
թիւն: Այդ պատճառով, հողաբաժնիները
դուրս եղած հերկիւի հողերից, արօտատեղի-
ներից և անտառներից օգտվել—գիւղացիներին
ըր կարող են միայն այն դէպքում, երբ մաս-
նաւոր համաձայնութիւն կայացնեն նրանց
աւերելու հետ: Բայց ես միջոցների կանոնի բա-
ւարարութիւն տալու գիւղացիների հողի ու-
նեցած պահանջներին, յանձնելով նրանց օգու-
վելու արքունի ազատ հողերով, նպատաւոր
պայմաններով, և ձեռք բերել մասնաւոր հո-
ղաւորների հողերը, գնելով այդ հողերը գիւղա-
կան հողային բանկի աշակցութեամբ:

Ի վերջոյ, հաւաքելու եմ գիւղացիներին
զբաղվել հանդարտ իրանց անտառական գոր-
ծերով, չը հաւատալ չարաւիտ անձանց շող-
կերին, և յիշել, որ Թագաւոր Կայսրը կայս-
րութեան ժողովրդի բարօրութեան համար
ունեցած Իր հոգեւոր և քաղաքական անհա-
ւար կենցաղի բարեկազմութիւնը:

Գնենք ալ ազգաւորա-
կան Վորոնցով-Դաշկով

ՆՈՐՀՐԴԱՅԾՈՒԹԻՒՆ ՓՈՆՏՐԱՔՍԻ ՄՕՏ

Աւետիկ Սահակեան, Ձերը Պայծառափայլու-
թիւն, Թագաւորի կամքով Դուք հրաւիրել էք
մեզ՝ տեղական գործողներին, նպատակու-
ղեմակի տնտեսութեան բարենորոգումները
կեանքի մէջ ներմուծելու: Անկասկած գնակի
բարենորոգումը մի հիմք է, որը շատ կարևոր
նշանակութիւն ունի մեր երկրի անտեսա-
հասարակական կեանքի վրա և մեր ամբողջ
երկրի ազգաբնակչութիւնը վաղուց ծաւալ է
նրան: Ձեռնակի հարցը մեզանում ոչ միայն
արդէն հասունացել է, այլ և հասունութիւնից
անցնելով: Որքան էլ որ մեծ լինի այդ թէթօ-
մի նշանակութիւնը, բայց դա միայն բաւա-
կան չէ երկրի խաղաղութեան և կեանքի
իր բոլոր ծաւալով վերածննդի համար:
Պէտք է շտապել ներմուծել հողային, դատա-
տանական, դպրոցական և այլ բէթօրներ,
որպէս դա մեր երկրին էլ ներքին նահանգնե-
րին հաւասար պայմանների մէջ դրվի: Մեր
դէպի պետութիւն և դէպի ազգաբնակչութիւն
ունեցած պարտքը պարտաւորեցնում է մեզ
այդ մեր բոլոր ուժերը իրագործելու այդ խո-
շոր բէթօրը, բայց դա համար ամենից առաջ
մենք պէտք է համոզվենք, որը Ձեր Պայծա-
ռափայլութեան դիւանի կազմած գիւղացաբի
մէջ առարկված միջոցները և նախագիծերը
նպատակաւոր են: Այդ գիւղացաբից երևում
է, որ գնակի տնտեսութեան բէթօրների
խնդիրը տրվելու է գաւառական և նահանգա-
կան խորհուրդների ընտրութեանը, և այդ խոր-
հուրդները հրաւիրվելու են հողատէրերի,
գիւղացիների և քաղաքացիների ներկայացու-
ցիչներից:

Քննութեան այդ ձևը չէ համապատասխա-
նում ինքնավարութեան մեծ գաղափարին և
աջողութիւն չէ խօստանում: Ձեռնարկում, ըստ
իր էութեան, անդաւադար, համաժողովրդա-
կան է և շօշափում է ազգաբնակչութեան բոլոր
խմբերի շահերը, այդ պատճառով էլ զեմաւ-
վօր հարցը ընելու համար պէտք է մասնակ-
ցութեան կողմէն և մեծանքի, արհեստա-
ւորների, մի խօսքով բոլոր զանազանների
ներկայացուցիչները: Դա մեզ ուղիղ միջոցն
է իմանալու ժողովրդի կարծիքը գնահատելու
մասին: Օգնել սղաբնակչութեանը վճռու-
իր կեանքի ամենակարևոր հարցերից մէկը՝
կազմում է մեր ինտելիգենցիայի սրբազան
պարտականութիւններից մէկը: Իսկ այդ
պարտքի կատարումը և ազգաբնակչութեանը
լայն օժանդակութիւն հասցնելը, հնարաւոր
է միայն այն ժամանակ, երբ ինտելիգենցիան
սղաւ մուտք կունենայ ժողովրդի մէջ, անձն
անձնանքով կը լինի, ժողովները, խօսքը և
մասնաւոր ազատ կը լինեն: Այնքանով գոյութիւն
ունեցող 1864, 1890 և 1903 թւի գնակի կա-
նոնադրութիւնների քննութեանը, ես պէտք է
տեսնեմ, որ նրանցից ոչ մէկը չէ կարող բաւա-
րարութիւն տալ կեանքի հասարակական—բա-
ղաբանական պահանջներին: Մի քանի տարի ա-
ռաջ, գիւղատնտեսութեան կարիքների ընտու-
թեան ժամանակ, ես եռանդով պաշտպանում
էի 1864 թւի օրէնքը: Այդպիսով և անկողծօրէն
հաւատում էի, որ գնահատում կը վերանորոգէ
մեր գիւղի կեանքը: Այժմ ես այդ չեմ կարող
ասել: Վերջին ժամանակները կեանքը արագ
առաջ է գնացել. ազգաբնակչութիւնը հասու-
նացել է ոչ միայն գիւղական լայն ինքնավա-
րութեան համար, այլ և պետական, որ փետր-
վարի 18-ի բնակչական ընդունել է: Այժմ
1864 թւի գնակի օրէնքը կարող է
ենթարկել արժատական փոփոխութիւնների,
որոնք, իմ խորին համոզմամբ, պէտք է լինեն
հետեւեալները. 1) մինչև այժմ գնահատում լուր
անտեսական հաստատութիւն էր, այժմ պէտք
է լրացնել, տալով նրան օրէնսդրական նախա-
ձեռնութեան և երկրին վերաբերեալ բոլոր օ-
րէնքների հաւանութեան իրաւունքը: Ձեռնու-
վօր իրաւունքների այդպիսի ընդլայնումը ա-
ռաջ է գալիս մեր երկրի օրէնքաւարութիւնից
ամեն կողմից—տնտեսական, կենցաղական և
այլ, որ պահանջում է համաձայնեցնել օրէնք-
ները տեղական պայմանների հետ, որոնց
աղբիւր հանդիսանում է ինքը գնահատում: Ի
թիւս սլոյց, 1904 թ. դեկտեմբերի 12-ի ու-
կազմ ցույց է տալիս գնահատելու իրաւունքների
և ֆունկցիաների ընդլայնման անհրաժեշտու-
թիւնը: 2) Գոյեալից ցնցող, որ պահանջում
է յիշեալ կանոնադրութիւնը, եղածներից լա-
ւագոյնը, շատ մեծ է և չէ համապատասխա-
նում երկրի մասն հողատիրութեան: Ցնցող
կարելի է նուազեցնել մինչև minimum, այն է,
ընտրողական իրաւունք տալ իւրաքանչիւրին,
ով մի թվաչափ հող ունի. գնահատված գոր-
ծի աշխուրթիւնը և հաստատութիւնը կախ-
ված է ազգաբնակչութեան և ինտելիգենցիայի
միաբան գործակցութիւնից, ուստի հարկա-
ւոր է տալ բոլոր կերթված անձանց ընտա-
կան իրաւունք, բայց ես աւելի լաւ կը համա-
բէի բոլորովին վերացնել ցնցող և ամբողջ
ազգաբնակչութեան հնարաւորութիւն տալ
ընտրել և ընտրվել: Թող ամենքը միաբանու-
թեամբ մասնակցեն ստեղծագործական աշխա-
տութեան ամբողջ երկրի բարօրութեան հա-
մար և ամենքը թող պատասխանատու լինեն
ընդհանուր գործին համար:

3) Ձեռնարկով արդենւաւոր գործունէու-
թիւնը պահանջում է կատարեալ ինքնուրու-
թիւն և անկախութիւն վարչական խնամա-
կաւորութիւնից:

4) Ձեռնարկով պէտք է վերապահվել իրա-
ւունք ընդհանուր—գնահատվող ժողովների հա-
ւերվելու, խորհրդակցելու համար երկրի ընդ-
հանուր կարիքների մասին:

5) Ձեռնարկով հաստատութիւնների հիմն
և հիմնական սաղմն պէտք է ծառայի գնահա-
տվողի փոքրիկ միութիւնը, որ առանձնապէս

կարևոր նշանակութիւն ունի մեր երկրի համար:

Իմ առաջարկած սկզբունքները վրա կազմակերպված զենամասեր կը դառնայ բարենորոգիչ հաստատութիւն երկրի և պետութեան համար և համարձակվում են կարծիք, ազգաբնակչութեան կողմից ուրախութեան և գոհացողութեան զգացմունքներով կընդունվի:

(Կը շարունակվի)

Մ Մ Մ Ո Ւ Լ

Բազուկ և Երևանի աղետալի ու մեր երկրի պատմութեան վրա խայտառակութեան անշնչելի դրոշմ դրած զէպերը շարունակ զբաղեցնում են մտածողներին և դեռ պէտք է զբաղեցնեն: Ազգայն պատմութիւնը, այս անկաշառ և անաշուտ, անկողմնական դատա որը իր արդար, խիստ և անողորմ դատաւճիւրը կարտասանէ և մենք տեղիք ունենք հաւատարմ, մենք համոզված ենք, որ այդ դատաւճիւրը ի նպատակ հայ ժողովրդի կը լինի և խայտառակութեան կնիքը նրա ճակատին չի դրօշմիլ: Մինչ այդ հետաքրքիր է իմանալ և մեր ժամանակի լաւագոյն մտածողներն ու հեղինակութիւնները կարծիքը:

Այդ նպատակով Բազուկ «Երկր» լրագիրը դիմել է զանազան գրողներին և հեղինակաւոր անձանց, խնդրելով յայտնել իրանց կարծիքը հայ-թուրքական ընդհարման առիթով: Լրագիրը հրատարակել է այժմ, թէ և ոչ ամբողջովին, ինչպէս յայտնել է ինքը—և այդ իրանից անկախ պատճառներով—հոշակաւոր ողուս գրող Մաքսիմ Գորկու կարծիքը:

«Յարգելի ընկեր—գրում է Մաքսիմ Գորկին—դուք հարցնում էք թէ ինչ եմ մտածում եմ Կովկասի ժամանակակից զէպերի մասին: Ամօթ է և կսկծալի կարգաւ և լսել այն, ինչ որ կատարվում է ձեզ մօտ: Եւ այնպէս շնորհագրի սիրում եմ այդ սքանչելի երկրները, հսկայական գեղեցկութեան և ոյժի այդ մարմնացումը, նրա սարերը—թեւաւորված ձևերով, նրա հովիտները և ձորերը—լի արագահոս վտակների աղմուկով, նրա գեղեցիկ, վէս դաւաճները: Կովկաս եղած ժամանակս, ես ամենուրեք տեսնում էի, թէ ինչպէս խաղաղ և սիրով աշխատում էին միասին վրացի, թուրք և հայի հետ, ինչպէս մասնակցներ նման ուրախ և պարզ նրանք կատակաբանում էին, երգում էին և ծիծաղում և ինչպէս զփուլում է հաւատալ, որ այդ պարզ և լաւ մարդիկը այժմ բթօրէն և անստօրէն կոտորում են միմեանց, հնազանդվելով իրանց զրդող չար և խաւար ոյժիս: Ինչ որ այնքան չէ ձնշում այդ մարդկանց անցյալներին, որքան յիշատակներն և ինչ թուում է, որ ամբողջ երկրի համար միասնական պիտի լինի արագեղանքները Բազուկ և Երևանում, չեն տարբերվում իրանց պատմականորով նոյնպէս արագեղանքները Կիւնովում, Վարշավայում, Ժնևում և Լոնդոնում:

Այսպէս աւելի բացատրելով այդ միտքը, հեղինակը ապացուցանում է, որ ներքին այդ երկպառակութեան մէջ ընկղմված ազգութիւնները իրանք մեղաւոր չեն նրա ծագման համար:

«Բայց մարդիկ—թուրք, ուս, հայ, հրէ, լեւ, ֆինն—ամենքը մի բան են ցանկանում ապրել աւելի լաւ, քան ապրում է: Եւ ամենքն էլ հաւասարապէս չունեն ազատութիւն, չունեն իրաւունք ապրել համաձայն իրանց կեանքի ցեղական, կրօնական և կենցաղական պայմաններին: Ինչ է պէտք ամենից շուտով մարդիկ և ազգի աճման համար: Իրաւունք՝ ազատօրէն որոշել իր անձնական և հասարակական ցանկութիւնները իրաւունք՝ ազատօրէն կազմել հանրակենցաղի ձևերը, որոնք աւելի ընդարձակ են իր հոգու և իր ցեղի հոգու համար: Օրինակ սիթէ հայը գրկում է թուրքին այդ ազատութիւնից: Եւ մի թէ՛ վրացին, մի թէ՛ ուսը, հրէան և լեւի կապված չեն ոտքով ձեռքով նոյն ոյժի կողմից, որը ևս հաւասարապէս ծանրանում է և թուրքի ուսերի վրա:

Նամակի վերեւում հեղինակը կոչ է անում Ռուսաստանի բոլոր ազնիւ գաւառներին միասնա՝ կովկաս համար զորքի խաւար և չար ոյժի դէմ, և եղբայրակցում է. «Թող մեր ամենքի մէջ լինի հաւասարութիւն և եղբայրութիւն, թող մեզ ամենքիս լուսաւորի բանականութեան լոյսը. ձուլվենք ամենքս ի մի մեծ, անյաղթելի կամք և այն ժամանակ—կեցցէ ազատութիւնը»:

Մեր կողմից մեր հոգու բոլոր գործիքամբ ձայնակցենք մենք հաճաքելի ողուս գրողին, որ այնքան շատ նպաստում է մտքնել մասնային խաւար մտքերի մէջ եղբայրասիրութիւն, խաղաղութիւն, ազգայնական համեմատելութեան գաղափարները:

Վերջերս, ինչպէս յայտնի է, մայրաքաղաքի ողուսաց թերթերում քննութեան առարկայ դարձաւ մուսուլմանները պատգամաւորութեան Կովկասի Փոխարքային ներկայացրած

պետիցիան, որի մէջ պատգամաւորութիւնը ծանր մեղադրանքներ էր բարդել հայերի վրա: Պետերբուրգի «Сынъ Отечества» թերթի յուլիսի 14-ի համարում տպված է պ. Պանամա-րէվի մի մեծ յօդուածը «Ազգայնական և քաղաքական հոսանքները Կովկասում» վերնագրով: Այդ յօդուածի թարգմանութիւնը առանձին տալիս ենք այսօր: Մենք ուրախ ենք, որ պետիցիայի մէջ հայերի դէմ արտայայտված մտքերը գնահատութիւնը անում է մի ողուս թերթ, որը հեռուից աւելի անկողմնապահօրէն և անաչառօրէն կարող է ընկնել և դատել:

ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Հետեւելով կովկասեան հասարակական կեանքին և մասնակցին, որքան որ նրանք երևան են դալիս իրի և կովկասեան հասարակութեան ձգտումները արտայայտելու, կարելի է հաստատել, որ հասարակական միտքը, ճիշտ այնպէս, ինչպէս որ Ռուսաստանում է, ծայր-երկրային քաղաքականութեան շնորհիւ ստեղծված ներկայ անտանելի դրութեան ընդադատութիւնը վերջացնելով, ներկայումս մշտնադէմ է ազգայն քաղաքական և հասարակական կեանքի ձևեր, որոնք պէտք է երաշխաւորեն կովկասեան բազմաթիւ ազգութիւններին իրական կարգը և ազատ զարգացումը:

Իր ցանկութիւններին, ձգտումներին և կարծիքներին մասին խօսել է հենց ինքը կովկասեան հասարակութիւնը տեղական մասնակցի մէջ, բազմաթիւ որոշումներով և այլն:

Ներկայումս արդէն բոլորովին պարզ կերպով գծադրվել են այն ազգայնական և քաղաքական համախմբումները, որոնք վերջի վերջոյ պէտք է քաղաքական գործօնները դեր կատարեն երկրում: Դրա համար անհրաժեշտ է աւելի մօտ հետեւել այդ համախմբումներին և պարզել այդ արդէն այժմ էլ քաղականապէս նշանաւոր ոյժերի յարաբերութիւնը:

Որքան էլ փորձում էին վարդապետել կովկասեան նախկին քաղաքականութեամբ ծայր-երկրային հարցերը, բայց նրանց չէր կարելի ոչ մի կերպով ոչնչացնել, որովհետեւ հենց որ կեանքը թաղեց անցեալ քաղաքականութիւնը, այդ կեանքը բարձրացան հենց իրանք: Հայ-թուրք, վրացիները և թուրքերը մէջ ամենից առաջ երևան եկան իրանց ազգայնական կարծիքները, վերադարձում հայերի եկեղեցապատկան և մահմեդականների վաղուֆային կալուածներին, եկեղեցական ծիսակատարութիւնը վրացիներին լեզուով, շնորհում բոլոր ազգութիւններին իրաւունք մայրենի լեզուով դաստաւորութեան, ուսումնաբաններին և բարեգործական հիմնարկութիւններին բացում, տեղական լեզուներով լոյս տեսնող մամուլի վերաբերմամբ ճնշումները վերացում, իրաւունքներով հաւասարացնել մահմեդականներին ըրիտսոն նեայ ազգաբնակչութեան հետ և այլն:

Այդ ամանաւոր կարելիքների հետ միասին զուգընթացաբար կանգնած են և բոլոր ազգութիւններին յատուկ ուրիշ ընդհանուր քաղաքական և սոցիալ-տնտեսական հարցեր. գենտովային ինքնավարութեան, երգուեաների դատարան մտցնելը, դատաստանական հիմնարկութիւններին մէջ ընթերցումը մտցնելը, դրանք ազգաբնակչութեան հետ մօտեցնելու նպատակով, Վրաստանի ժամանակաւոր պարտաւորված գիւղացիներին մասին կանոնադրութեան վերացում և գաղթականական հոլաշին և հողաշահային հարցերը:

Քաղաքական և ազգայնական իւրաքանչիւր խումբ դնում է ապր հարցերը իրեն չէր պահանջները ծրագրի ամենակարեւոր կէտերը:

Բայց զրաւում չեն սահմանափակվում կովկասեան ազգայնական և քաղաքական խմբերի ձգտումները: Նրանք կատարելապէս գիտակցում են, որ ծայր-երկրային կարիքներին կանոնաւոր լուծում կը կատարվի միմիայն այն զէպերով, երբ կովկասեան ազգաբնակչութիւնը ազգայն համառոտական ժողովրդական ներկայացուցչութեամբ կը ստանայ լայն ծայր-երկրային ինքնավարութիւն: Այդ ձգտումը կազմում է ազգայնական և քաղաքական խմբերի բոլոր որոշումների կարգիդիւ կէտը: Իրաւունք խօսվում է Երևանի, Քուրդայի և Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւններին, կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան և ուրիշներին որոշումները մէջ:

Եւ ի՞նչ ամենքը սկզբունքով ընդունում են, որ անհրաժեշտ է կովկասեան ծայր-երկրային ինքնավարութեան ստեղծում, այդ զէպերով վերոյիշեալ հիմնարկութեան տեղի մասին տարաձայնութիւններ գոյութիւն ունին: Հայ-կական և թուրքական հանրագիտները խօսում

են ընդհանուր ազգային կովկասեան ժողովրդական թիֆլիսում տեղական հարցեր և օրէնքներ վճարելու ու հրատարակելու համար: Քուրդայի քաղաքային ինքնավարութիւնն էլ յունիսի 15 ի ժողովում ընդունել է յաճախ-ժողովի նախագիծը Վրաստանի ինքնավարութեան մասին, որի ներկայացուցչական ժողովը պէտք է տեղի ունենայ Թիֆլիսում, և որը ընտրված լինի ռազմավարական սկզբունքներով և ամփոփել Թիֆլիսի և Քուրդայի նահանգները, Բաթումի և Զաքաթալի շրջանը, ինչպէս յայտնի է, դեռ առաջ էլ այդպիսի ցանկութիւններ արտայայտել է վրաց ազնուականութիւնը:

Անկասկած է, որ Վրաստանի ինքնավարութիւնը կազմում է վրաց հասարակութեան լայն շրջաններին անկախութիւններին առարկան: Այդ անկախութիւնը ընդունակ է համալրանք ներշնչելու և վրացի գիւղական ազգաբնակչութեան, շնորհիւ ընտրողական սխաւածի գեմոկրատիական այն սկզբունքներ, որ կազմում է նրա հիմքը:

Վրացական ինքնավարութեան ստեղծման շողովիւնը պայմանաւորվում է աշխարհագրական և ազգագրական նպաստաւոր պայմաններով: Վրացիները Քուրդայի և Թիֆլիսի նահանգներին ազգաբնակչութեան մէջ խիտ մասնա են ներկայացնում և այդ տեսակէտից նրանց դրութիւնը նպաստաւոր կերպով տարբերվում է հայերից, որոնք ցրված են ամբողջ Անդրկովկասում և ոչ մի նահանգում չեն կազմում խիտ ազգաբնակչութիւն կամ դոնէ այդ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը: Դրեթէ ամեն տեղ հայերը ապրում են միասին թուրքերի հետ և վերջիններս գրեթէ ամեն տեղ կազմում են ազգաբնակչութեան մեծամասնութիւնը:

Իրանով որոշ չափով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ հայական որոշումները մէջ մենք չենք տեսնում պահանջներ հայկական ինքնավարութեան մասին: Հայերի ցանկութիւնները յանգում են ընդհանուր կովկասեան ներկայացուցչական ժողովին, որ հիմնված է դեմոկրատիական սկզբունքներին վրա:

«Նկատելով հայերի քաղաքական ոյժը ներանց բարձր կուլտուրականութեան և անասական ուժեղութեան մէջ, իսկ նրանց տկարութիւնը—ժողովրդի սակաւութեան և ցրվածութեան մէջ, թուրքերը իրանց միջնորդութիւններին և կարգադրութիւններին մէջ շնչատում են, որ «միակ-հմարաւոր և մուսուլմաններին համար ընդունելի սկզբունքը հանդիսանում է յարաբերական ներկայացուցչութեան պրինցիպը, որը միայն նշանակված է մուսուլմանների համար, համաձայն իրանց թիւին և տնտեսական նշանակութեան, այն դերը և ազդեցութիւնը երկրի կեանքի մէջ, որից չէր բանք մինչև այսօր զրկված էին» («Каси» № 99):

Ինչպէս երևում է այդ քաղաքական, թուրքական ցանկութիւնները «յարաբերական ներկայացուցչութեան» մասին հակվում են ոչ թէ ազգաբնակչութեան փոքրամասնութեան իրաւունքները երաշխաւորելու, այլ ամբողջութեամբ թուական կողմից տիրապետող մուսուլմանների նշանակութիւնը արեւելեան Անդրկովկասում:

Արդէն զանազան ազգութիւններին ձգտումների այդ ընդհանուր տեսութիւնից յետոյ չէ կարելի ի նկատի չունենալ և շփման այն լէտերը, որոնք ազգայն քաղաքական կուլը պէտք է ներկեն աշխարհի գլխով:

Կովկասեան մահմեդականներին, իրեն քաղաքական և կուլտուրական ոյժի նշանակութիւնը, բացայայտվում է հայկա-թուրքական յարաբերութիւններից, թէկուզ վերջին ժամանակի, և մուսուլման ինտելիգենցիայի իրենալներին:

«Կովկասեան մահմեդականներին բռնած դերքը, ներկայումս, յայտնի է կացուցիլ բաւականաչափ կերպով այն պատգամաւորութիւնը, որ յունիսի 10 ին ներկայացաւ Կովկասի նոր Փոխարքային»:

«Միջնորդելով իրանց կրօնական և իրաւագիտական իրաւունքներին սահմանափակման փոփոխութեան և գիւղացիների անձնական կարծիքի միացումը ոչնչացման մասին, թուրքական պատգամաւորութիւնը միջնորդում է մի և նոյն ժամանակ ազնուականութիւնը, այն է խանութի եւ բեգութիւն ուժեղացնելու մասին, առաւել նրանց ազնուականական այն կազմակերպութիւնը, որ գոյութիւն ունի Ռուսաստանում և Վրաստանում, իսկ «մինչև այդ, մինչև դասակարգային իրաւունքները որոշելու և հաստատելը շնորհիւ իրանց ժամանակաւոր

ազնուական ժողով:

Եւ ուրեմն, այն ժամանակ, երբ ամբողջ երկրի առաջաւոր խմբերը տեսնում են ժողովրդական բարօրութիւնը միջնադարեան առանձնաշնորհումների և դասակարգային կազմակերպութիւնների շնչման մէջ, թուրքերը բոլորովին հակառակ բան են միջնորդում—ուժեղացնել միջնադարեան առանձնաշնորհումները և դասակարգային բաժանումները:

«Բայց աւելի պարզ կերպով բացատրվում է թուրքերի աշխարհայնացքը կովկասեան վերջին զէպերի հետեւալ լուսաբանութիւնից: Թուրք պատգամաւորութիւնը ցոյց տուեց Փոխարքային, թէ «մուսուլմանները, զիսակցելով ամբողջ երկրին սպասուցող վստակ այն մարդկանց կազմակերպված գործողութիւններից, որոնք կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ, նոյն իսկ ուսմիք առաջ, դրված են պաշտպանվողների դերում»:

Թուրք պատգամաւորութիւնը չէ յայտնում թէ ում էր սպանում «մտանդկազմակերպված գործողութիւններից», բայց առանց այդ բացատրութիւններին էլ փաստերից յայտնի է յամեն մայն զէպս, վստաքը չէր սպանում թուրքերին:

«Շօշափելով Երևանի զէպերը, թուրք պատգամաւորութիւնը նոյնպէս աներկայ կերպով ցոյց է տալիս Փոխարքային, որ հայերը յեղափոխականներ են և վերջում է թուրքերից որ և է պատասխանատուութիւն սպանութիւնների և աւարառութիւնների համար»:

«Այդ դժբաղդ զէպերի ժամանակ մահմեդականները պէտք է պաշտպանվին կազմակերպված յարձակումներից, դուստր, ինչպէս ցոյց են տալիս փաստերը, գէներ և ուրիշ միջոցներ ունեն մեծ մասամբ ոչ թէ մահմեդականները, որոնք արդէն վաղուց են զինաթափված, (?) զէներ ձեռք բերելու և այլն, ինչպէս նաև ուսմիք ցնցելու համար հարկաւոր է ունենալ դրամական առանձին ֆոնտեր, որոնք ցոյց են տալիս զրկված են մահմեդականները, վերջապէս մահմեդականներ չեն հետաւում այնպիսի որոշ նպատակների, որոնցից ամենաաղիւսալին՝ ձգտում է տիրապետել ուրիշներին վրա, մատուցապէս և անտեսալանապէս ներանց ստրկացնելու...» («Երկր»):

«Այդպիսով, թուրք պատգամաւորութիւնը խաղաղ «Մօսկովսկի Վէրոստոյի» և «Նովոյե Վրէմայի» սովորական դերը:

Նա ոչ միայն ներկայացրեց պատահածը յեղաշրջված ձևով, ոչ միայն հերքեց պաշտօնապէս և անպաշտօնապէս վկայված փաստերը, այլ և հանդիս եկաւ ուղղակի մատուցիչ համար և զրպարտութիւնը ամբողջ հայ ազգի հասցէին»:

Ինչպիսի մօտիվներով, երևում է վերջին բերված տեղերից: Հարեանի կուլտուրայի և կըրթութեան բարձրութեան մէջ թուրքական պատգամաւորութիւնը տեսնում է վտանգ յետաւոր թուրք ազգաբնակչութեան համար, որ իրեն թէ տեղի է տալիս կեանքի մէջ: (Զէ որ մի և նոյն բանն են առում ընտելիներին և հրէաների մասին...): Փոխադարձ իրանց ազգայնական ստեղծագործական ոյժերը ազատ կերպով զարգացնելու և ձգտելու իրանց մասնային կուլտուրական վերածնութեան և հենց դոնէ ձգտելու այդ միակ բանին, թուրքական պատգամաւորութիւնը աւելի խորամուկապարհ է դնում մի ամբողջ ազգի վրա մեղադրութիւններ բարդել քաղաքական անբարեյոխութեան տեսակէտից, իր հարեաններին կովկասեան վարչութեան աչքում անուանարկելու համար: Բայց այդ դեռ ընչ է. թուրքական պատգամաւորութիւնը իր սուտ զրպարտութեան համար վարձատրութիւն է պահանջում: Նա «հաւատացած է», որ կոմս Վորոնցովի Կովկասի կառավարութեան օրով մահմեդականները ձեռք կը բերեն կառավարութեան վստահութիւնը, որով նրանք օգտվում էին կովկասեան առաջին փառաւոր յիշատակի օրերում:

Այդ նպատակով իրանց յատուկ շիտակութեամբ և անկեղծութեամբ կովկասեան մահմեդականները արտայայտում են պատրաստակամութիւն ամեն միջոցների ձեռնարկելու, որոնք յանգում են երկրի հանգստացման և խաղաղացմանը:

«Ընդ ձեռք կը բերվի երկրի խաղաղութիւնը և երբ կը սկսվի Փոխարքայի բարենորոգչական գործունէութիւնը, վերջացնում է պատգամաւորութիւնը, ջերք Պայծառափայլութեան համար դեռ աւելի կը պարզվի «մահմեդականներին այն զբաւիչ ու բարոյապահ կերպարանը» որը, ինչպէս ռուս բարեհաճեցիքը ասելու այս տարվա մարտի 28-ին Պետերբուրգում ընդունած թուրքական պատ-

գամառութեան, «ձեզ լաւ յայտնի է»։ Աւելի հանդիսաւոր վկայութիւն թուրքական «օրինականութեան» և հայկական «անբարեխառնութեան» մասին դժուար է երևակայել։ Թուրքական պատգամաւորութիւնը իր միասին փառաւոր կերպով կատարել է. նա ցոյց է տուել ռուս հասարակութեան կողմէն թուրքական բուրժուական ընկերակցութեան և հոգեւորականութեան հանդէպ, որոնք հետեւեալ պարագային և գիւղացիները գտնվելով թուրքական պոռտուկատիւնի և հոգեւորականութեան ճշմարիտ և հաւածման տակ, պատգամաւորութիւններ չուղարկեցին և իրանց կարծիքները չարտայայտեցին, ասեմք ներկայ պայմաններէ մէջ էլ հազիւ թէ նրանք կարողանան անկախ կարծիք արտայայտել...

Կոստ. Պոստմարել

ՆԱԽԻՉԵՒԱՆԻ ԱՂԵՏԻ ԶՈՆԵՐԻ ՕԴՏԻՆ

Ստացանք՝ 1) Կարսի Կ. Մէլիք-Անդրեանի ձեռքով հաւաքած 5 ր. 75 կ., 2) Կարսի Ան. Թէօֆիլանի ձեռքով հաւաքած 5 ր., 3) Զաքարիայի տուած ներկայացումի գումար գրեւոր, Յով. Սալաւորեանի միջոցով 92 ր. 52 կ., 4) Լաւրաճի կայար. Ա. Յարութիւնեանի ձեռքով հաւաքած 100 ր., 5) Բալախանի Շիրին Արաքանեանի ձեռքով հաւաքած 30 ր. 50 կ., 6) Բալախանի Մ. Ստեփանեանի ձեռքով հաւաքած 136 ր. 15 կ., 7) Առաքել Գևորգի Լ. Հայրապետեանի ձեռքով հաւաքած 12 ր. 70 կ., 8) Բերբէյ Մ. Ս. Անանեանի ձեռքով հաւաքած 14 ր. 75 կ., 9) Բագրեւոր վաճառական Յ. Մանգասարեանի յիշատակ իր վաղամեծի որդի Լևոնի (առաջին. մասնաժ. յանձնելու համար) 50 ր., 10) Թ. Բերբէյանի (Յօրտ № 1) 20 ր., 11) Բագրեւոր Մ. Զուրաբեանի ձեռքով հաւաքած 20 ր., 12) Կապուտի Մ. Ներսէսեանի և Յ. Բերբէյանի միջոցով մի շրջանում հաւաքած 9 ր., 13) Բալախանի Ա. Աւագեանի ձեռքով Նորէի արհեստանոցի հայ բանուորներից հաւաքած (առաջին. մասնաժ. յանձնելու համար) 51 ր. 36 կ., 14) Բագրեւոր Մ. Զաքարեանի, Գալստեանի, Բենեմանի և Պետրոսեանի ձեռքով հաւաքած 56 ր., 15) Զուր Օստ. Կուստուկ Բաշիբաշի Մէլիքեանի ձեռքով 30 ր. 50 կ., 16) Բալախանի Ա. Անանեանի ձեռքով «Մօսկովսկո-Կովկասի» ընկ. ծառայողներից 102 ր. 50 կ.։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 19512 ր. 55 կօպէկ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Վերմիշանը խնդրել է Կովկասի Փոստաբային, որ թոյլ տրվի իրան Դուռայի ձայնաւորներին հաղորդել քաղաքային և զինակի վարչութիւններին ներկայացուցիչների Մօսկովսկոյում ունեցած խորհրդակցութիւնների արդիւնները։

Թիֆլիսի Դուռայի յուլիսի 19-ի նիստին քաղաքագլուխ պ. Վերմիշանը ձայնաւորներին ծանօթացրելով Դուռայի տուած խնդիրների վիճակի հետ ի միջի այլոց երեւց, որ Դուռայի խնդիրը՝ քաղաքի քաղաքի ոստիկանութեան ծախքերից՝ մերժված է, Թիֆլիսում հիւանդանոցային մասնակի տուրք մտցնելու մասին յարուցված միջնորդութիւնը մինչստորութիւնը չէ ընկնել, որովհետեւ մտադրութիւն կայ շուտով այդ հարցն օրինական ճանապարհով լուծել։ Իսկ քաղաքի սայապատական համար Թիֆլիսից բերվող քարերը մաքուր պղպեղաւոր հարցը ֆինանսների մինիստրի կողմից կը ներկայացվի Բարձրագոյն բարենաճութեան։

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնն արդէն մշակել է կրթական գիւղականները բնագործի ծրագիրը և շուտով կուղարկէ միւս վարչութիւնները ընկերութեանը։ Այդ ծրագրի համաձայն՝ պէտք է լինեն 3 տեսակի գիւղացիները՝ յունարէն և լատիններէն լեզուներով, միայն լատիններէնով և բնակական դպրոց։ Որոշված է դասատուներին ուժեղներն աւելացնել իւրաքանչիւր 5 տարին մէ անգամ։ Բացի դրանից՝ ամեն մի ուսուցիչ, որ ամուսն է հանում իր մանկապարտական գործունէութեամբ, ստանում է «գիւղացիայի պրօֆէսոր» տիտղոսը՝ ինչպէս Գերմանիայում։ Այսպիսով դաստիարակութեան գործը բարելաւելու նպատակով, մտադրութիւն կայ հիմնել դաստիարակների պաշտօն։

Պօստ-հեռագրական կենտրոնական վարչութիւնը հետեւեալ կարգադրութիւններն է արել կանանց ծառայութեան վերաբերմամբ մի և նոյն վարչութեան մէջ. 1) ծառայութեան մէջ ընդունելու ժամանակ պէտք է նախապատուութիւն տալ օրիորդներին կամ անդամակայրներին։ 2) բժշկի վկայած և օրդեններութեան դէպքի առիթով, բացակայութիւնը յարգել է միայն մի ամիս ժամանակով, առանց ուժեղ կարելու։ 3) ծառայութեան ժամանակ կանայք պէտք է հաշնեն մոխրագոյն, փակ զգեստներ։ 4) հեռագրական գործում կանայք տղամարդկանց հետ հաւասար պարտականութիւն են ունենալու, առանց որ և է թիթեւացան։ 5) գրասենեակի ծառայութիւնները կարող են յանձնվել ազատ-վարձով կանանց։

Յուլիսի 19-ին, ինժեներներից քաղկացած մի յատուկ յանձնաժողով ընդունել էր էլէքտրական ֆունկցիոնների վերին ծայրից մինչև Կօօր տարվելէ բէքտրաբարձի ծրագիրը, նրա կայարանների և այլ շէնքերի տեղերը և այլն։ Այդ էլէքտրաբարձի ծրագրին արդէն մշակված է և շուտով կը ներկայացվի Կովկասի բարձր իշխանութեան հաստատութեանը։ Հաստատութիւնն ստանալուց անմիջապէս յետոյ՝ ձեռք կառնի զծի շինութիւնը։ Ենթադրում են, որ գիծը կարող է պատրաստ լինել առաջիկայ գարնան սկզբին։

Յուլիսի 17-ին Թիֆլիսի Մուշէյի պարտիզմ երկրորդական ժամը 10¹/₂-ին մի քանի անայտ անձեր սպանութեան փորձ արին օձորգօշին վերակայու Սանաքիձէին (այժմ անպաշտօն), վերադարձելով նրան բուսական ծառի կերպով։ Զբօսնող հասարակութիւնը, սարսափած, սկսեց փախչել ու ցրել գալ կողմնակի մութ անտառներ մէջ, բայց զինուորական մուգիկան նուազեց և կարգը նորից վերահաստատվեց։ Վերադարձին տարան հիւանդանոց։

Թիֆլիսի գիւղում, Կովկասի առաջին սպանութիւնի բառային ամառային բանակաւորում, իր սկիզբն առնելով մէջ սպանել են սրանից ժող 16 օր առաջ III վարչի հրամանատար կապիտան Մէնին։

Թիֆլիսի նահանգապետ արդէն հաստատել է առեւտրական պաշտամարմինը քաղաքի առաջին 3 մասերի համար, ամեն մէկի համար երկուական հոգաբարձու։

Կիւնիսկից «Русское Слово»-ի լրագրի թղթակիցը հեռագրում է. «Բէլէգիյի գաւառի Բիշկանովկա աւանում յուլիսի 11-ին տեղի ունեցան հակահրէական անկարգութիւններ տներ և խանութներ աւերելով և բռնութիւններ գործ դնելով մարդկանց վրա։ Թիթեւ վերադարձած են 4 հրէայ և 7 գիւղացի, չանգրուված են 4 հրէայ և 2 գիւղացի։

Վարչաւարում մտադրութիւն կար կազմելու լեհական հողատերերի ներկայացուցիչների ընդհանուր ժողովը։ «Сынъ Отечества» լրագիրը հաղորդում է, որ այդ ժողովն արգելված է։

«Русь» լրագիրը հաղորդում է, որ Պետերբուրգի նահանգի զանազան մասերում այս տարի սպասվում է սով։ Այդ մասին մանրամասն տեղեկութիւններ ստացվել են Պետերբուրգի նահանգական զեմստովի վարչութեան մէջ։

Մենք ստացանք հետեւեալ հեռագիրը Ալեքսանդրօպօլից։ «Այսօր, յուլիսի 21-ին, Ա. Բալախան, որ եկել է այսանկ մի օրով, կարգաւ մի դասախօսութիւն տեղական զեմստովային ինքնավարութեան մասին։ Դասախօսը ծանօթացրեց ունեւորներին կովկասեան զեմստովի խնդրի ծագման և զարգացման պատմութեան հետ, հաղորդեց տեղեկութիւններ եւրօպական պետութիւնների մէջ գոյութիւն ունեցող ինքնավարական կազմակերպութիւնների, նաև ուսուցող զեմստովի գործունէութեան մասին։ Վերջում յայտնելով մի շարք խորհրդածութիւններ այն բարեփոխութիւնների մասին, որ ցանկալի է մտցնել Անգլիոյ կառի համար մշակվող ծրագրի մէջ, առաջարկեց, որ տեղական իրաւիւղներ և բանիմաց անձինք նպաստեն կարելի չափ արդիւնաւէտ և բովանդակային դարձնել դասաւանդումը գումարվելիք խորհրդածութիւնները։

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Էնգէլի, յուլիսի 10-ին
Ամսիս 9-ին տեղիս դպրոցի դահլիճում, նախագահութեամբ պ. Հ. Մէլիք-Սարգսեանի կայացաւ դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը։ Ժողոված էին մօտ 50 հոգի, որոնցից միայն 44-ը համաձայն «Նոր-Ջուղայի ուսումնարանական կանոնադրութեան» իրաւունք ունէին ընտրուել, որովհետեւ Էնգէլիում ապրել էին ոչ պակաս 6 ամիս և այդ կանոնադրութեան հիման վրա էլ հոգաբարձութիւնը ընտրվեց ոչ թէ մէկ տարով, ինչպէս որ այդ լինում էր առաջ, այլ երեք տարով։

Պ. Մէլիք-Սարգսեանը ներկայացրեց ժողովին նախկին հոգաբարձութեան մի տարվայ ժամանակամիջոցի ուսումնարանին վերաբերեալ եւ մուտքի հաշիւը։ Այդ հաշիւից երևում է, որ դպրոցը անցեալ 1904/5 ուսումնարանական տարում մուտք է ունեցել մօտ 1138 թուան (այժմ մէկ թուանը հաւասար է ուսաց 1 ր. 50 կօպէկին մօտաւորապէս), որից 279 թուանը գոյացել է ծխակահէնի, նպաստներից, 255 թուանը արտաքին նրպաստներից, իսկ մնացածը՝ ներկայացուցիչներից, գրքերի ծախիւղ, եկեղեցուց և այլն։

Ծախք եղել է մօտ 978 թուան, որից արված է ուսուցչին տոնիկ 646 թուան, իսկ մնացած գումարը ծախված է դպրոցի այլ կարևոր պիտոյների համար. օրինակ ծառաների վարձ, լուսաւորութիւն, վառելիքի, ներկայացուցիչների ծախիւղ և այլն։ Կանխիկ դրամ մնում է 157 թուան, ուսուցչին արված է եղել բնակութեան համար սենեակներ, ծառայ, լուսաւորութիւն, վառելիք։

Դպրոցը ունեցել է տարվայ սկզբից 22 աշակերտ, իսկ վերջը 18—(մէկ աշակերտ մեռել է, իսկ երեքն էլ հեռացած են...)։

Ի պատիւ Էնգէլիի հայ գաղութի, նա ոչ մի ջանք չէ խնայում նիւթականագէտ ապահով դրութեան մէջ պահելու դպրոցը։

Հաշիւները ժողովին ներկայացնելուց յետոյ, հոգաբարձուները տուին իրանց հրաժարականը։ Ժողովը յայտնեց նախկին հոգաբարձուներին իր շնորհակալութիւնը և նոր հոգաբարձուների համար առաջարկեց 16 թեկնածուներ...

Դպրոցի ընտրութեամբ վերընտրվեցին հին հոգաբարձուներից, ինչպէս որ մենք արդէն գուշակել էինք «Մշակ» № 118, պ. պ. Բ. Տէր-Սարգսեան և Պ. Բառիշեանց, ընտրվեցին նորից պ. պ. Հ. Մէլիք-Սարգսեան, Ս. Ղազարեան և Մ. Թունեան, իսկ սրանց կանգնեցին ընտրվեցին նախկին հոգաբարձուներ պ. պ. Գ. Մէլիք-Արաքանեան, Զ. Ղազարեան և Ի. Տէր-Յովհաննիսեան։

Ընդհանրապէս վերջում ընտրութեան հետեւեալ լաւ է, բայց ցանկալի է համարվում որ կանգնեցանք իրանց հետ չը պահենք գործից և ինչպէս որ առաջ, նորից նուրբված լինէին հասարակական գործին։

Նոր հոգաբարձութեան ուղարկութիւնն ենք հրաւիրում հետեւեալ հարցերի վրա։ Եկեղեցին ունի մի կտոր ազատ հող, որի վրա կարելի է կրպակներ շինել տալ և տալ քրէնով և այդ կը լինի մի մշտական եկամուտ։ Երևութեան համար կարելի է եկեղեցու դրամապահից վերջնել, գիմնով այդ մասին պատշաճաւոր հոգևոր իշխանութեան։

Հարկաւոր է դպրոցի-եկեղեցու եղեգնեցանկապատը փոխել քարէ պարսպի։

Հարկաւոր է կարգաւորել դրամաւոր-ընթերցարանի դրութիւնը։

Էնգէլիի հայ և օտար քրիստոնեաների նշնանները թաղում են եկեղեցու բակում, որը շատ մեծ է։ Դոնէ իրանց երեխաների առողջութեան մասին մտածէին և հարց բարձրացնէին ուրիշ տեղ գերեզմանատուն ձեռք բերելու համար և զբաղով ապահովված լինէին դպրոցի դրութիւնը առողջապահական տեսակէտից, դեռ ևս մենք չենք խօսում այն ծանր տեսակարարութեան վրա, որ գերեզմանները կարող են թաղվ մանուկների մատաղ սրտերի վրա...

Մենք յոյս ունենք, որ նոր հոգաբարձութիւնը ուղ կը դարձնէ մեր շրջափած հարցերի վրա և կաշխատէ դրամականագէտ լուծել դրանց, որոնց լուծումը շատ բարդ է ծանր գործ է։

Շատել—Արար

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ
ՌԻՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
20 յուլիսի
ՀՈՍ, 20 յուլիսի։ Մի շատ հաւասար աղ-

բերից հաղորդում են, որ Կօմուրան հրահանգ է ստացել չը պահանջել պատերազմական տուգանք խօսքիս նեղ մտքով, այլ միայն ներկայացնել Վիտալիս պատերազմական ռուր ծախսերի մանրամասն հաշիւը խաղաղութիւնը կնքելու օրը։

ԿԱՆԵՍ, 20 յուլիսի։ Կանդիաում, որ ընկել է անգլիական բերդապահ զօրքը, պատերազմական դրութիւն է յայտարարված և բացի դրանից հեռագրներով, լրագրներով և նոյն իսկ նամակների համար խիստ ցենզուրա նշանակված։ Դրութիւնը օրէցօր աւելի է վատանում։

ՏԱՆԺԷՐ, 20 յուլիսի։ Տատուրբախը միջնորդում է սուլթանի մօտ թոյլտուութիւն ստանալու ծովային հեռագրաթիւը Տանֆերի և Մօգաթօրի մէջ շարունակելու համար։

ՊԱՐԻՉ, 20 յուլիսի։ Լուբէն ճանապարհը ընկաւ դէպի Մօսկովսկայա։ Բերթօն ստորագրեց այն դեկրետը, որ գնեւալ Պրեսնին նշանակում է գլխաւոր շտաբի հրամանատար Պրեսնինի փոխարէն, որ նշանակված է բարձրագոյն գնեւորական խորհրդի անդամ։

Կ. ՊՈԼԻՍ, 10 յուլիսի։ Սուլթանի կէտնէրէ դէմ փորձ անելու գործի ընտրութիւնը ետան դուն կերպով շարունակվում է, բայց առայժմ առանց հետեւեալի։ Ասում են, որ փորձ անելու օրը Կ. Պոլսից անայտացել է Ռազա ա-նուսով մի ուսու, որ ապրում էր աւստրիացի Մօրավիչի մօտ։ Վեց դեսպանութիւնների պատասխանը, որ զեկուցանում է Բ. Դոնաւի կեղծական ֆինանսների վերաբերմամբ ժողտրօլի մասին, երէկ յանձնվեց։ Դեսպանութիւնները շարունակում են պնդել, որ կօնտրօլը անհրաժեշտ է և ստատիկ զարմանք են տարտայալում այն հակառակութեան համար, որ անում է Բ. Դոնաւը։ Կօնտրօլը մի միջոց է, որ բոլորովին համապատասխանում է երկրի շահերին։

ԲԵԼԳՐԱՎԻ։ Սկուրլինայի համար կայացած ընտրութիւնների վերջնական հետեւեալը կառավարութեանը թողնում է փոքրամասնութեան մէջ։ Մինիստրութիւնը հրաժարական չէ տալիս։

ՆԻՒԵՐՈՒՄ, 20 յուլիսի։ Մշակված է լիապօր-ներին ընդունելու ծրագիրը։ Աւագութեան մասին հարցը վճռված է յօգուտ ուսանողների։ Երկու միսեաններն էլ Պարսոսուտ կը հասնեն երկուշաբթի օրը, ժամը 10-ին։ Տեղական նաւաշինարանի կօնսուսուղ ամենից առաջ կայցելի ուսուց, իսկ յետոյ Խաչատուրյան լիազօրեալներին իրանց նաւերում։ Ժամը 11-ին կը լինի ողջոյնի թողանթածութիւն, իսկ յետոյ երկու միսեաններն էլ ճանապարհ կընկնեն դէպի Պարսոսուտ, որտեղի քաղաքային տան առաջ նրանց կողմնեն նահանգապետը և ներգերբներն պարամիտին անդ մննորը։ Այդ բոլորից յետոյ երկու միսեաններն էլ կը գնան հիւրանոց։ «Կայսր Վիլհելմ» շոգեհաւը երէկ հաղորդել է անթիւ հեռագրով, որ ինքը գտնվում է Նանտուկաուից 80 անգլիական մղոն հեռաւորութեան վրա և այսօր կէսօրից յետոյ կը ժամանի Նիւ-Եօրկի։

ՄՈՍԿՎԱ, 20 յուլիսի։ Երկօրը ճանապարհ ընկաւ դէպի Հեռաւոր-Արեւել։

ԱՍՈՒՍԿԱ, 20 յուլիսի։ Անգլիկանները կընտրւ մի տարի ժամանակով հրատարակվում է զօրեղացած պաշտպանութեան դրութիւն։

ԿՐՕՆԵՏԱՆ, 20 յուլիսի։ Անգլիկան լրագրները հաղորդում են, որ Համբուրգից դուրս են եկել «Ենիսէյ» և ճանապարհների հաղորդակցութեան մինիստր գնած «Կրասնօսարսկ» և «Ենիսէյ» շոգեհաւերը։

ՆՕՎՕԶԵՐԿԱՅԿ, 20 յուլիսի։ Վերջացաւ Դօնի վրա խօսքի երեւու երկիւղը։ Վճռված է օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 1-ը արձակել բժշկական այն պետանալը որ հրաւերված էր կովկաս համաճարակի դէմ։

ԹԵՕԴՈՍԻԱ, 20 յուլիսի։ Վիլհելման գնդի գնդաւոր Մօզիօրեանը, որ փորձ էր արել այդ գնդի հրամանատար գնդապետ Գարցիկի կեանքի դէմ, գնեւորական—դաշտային դատաւանով դատապարտված է մահվան պատժի կախաղանով։

ԼՕՆԴՈՆ, 19 յուլիսի։ Լօնդօնի առևտրական պալատի նիստում Լօրդ Րօբերտսը առիթից օգտվեց, իր հայրենակիցներին զգուշացնելու այն վտանգից, որ ներկայացնում է զօրքի անբաւարար պատրաստութիւնը։ Ապահովութիւն ոչ միայն ընդդէմ պատերազմի, այլ և ընդդէմ բոլորայում տարածվող սարսափի՝ կարելի է ստանալ ոչ թէ դիպլո-մատային միջոցով կամ պետութիւնների հետ համաձայնութիւն կայացնելով, այլ բացառապէս գնեւորական ոյժերին այնպիսի կազմակերպութիւն տալով, որոնց ժամանակ ոչ մի

